



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՃՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ
Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՋ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՉԸ
ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ
ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ
ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում եւ շնորհակալորում բոլոր մասնակալածներին, ուսանողներին ու աշակերտներին՝ Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով:

Արթության ու գիտության հասկացումներն առաջնության ու հազոդությունների գրավական է թե՛ անհատական, թե՛ ժողովուրդների ու պետությունների կյանքում, ուժ ու պոտենցիալ՝ դժվարություններ հաղթահարելու, կորուստներ իրագործումներ արշահագրելու: Մեր երկրի պարզապես, մեր երազած հայրենիքի կառուցումը հնարավոր է միայն ուսույթ, կրթված սերունդների շնորհիվ, որոնք առ Մայրված ապավիստության պիտի շարունակեն մեր ժողովրդի կյանքը հարստացնել ու բարելավել՝ իրենց հոգու ու մեքի արարումներով, իրենց արեղծած գիտական, հոգեւոր ու մշակութային արժեքներով: Արթության ու գիտության անհատներով, համախումբ զանգեղով կրթական գործին սպասարելով, հնարավոր պիտի լինի մեր պետության ու ժողովրդի առգեւ սկիզբ առած մերապիտանների կոր պայմաններում ընթանալ առաջադիմության ու պարզապես անհերքարք հանապարհով:

Աղոթում ենք, որ Քարշոյալ Տիրոգ օրհնության կերթու ուսումնական պարիս պարզարովի բալում հազոդություններով ու ջերթերումներով ի շահ մեր երկրի ու աշխարհապիտու մեր ողգ ժողովրդի: Թող Մայրված ապավեն լինի կրթական գործի կրթյալներին ու կրթական հասպարությունների բոլոր սաներին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերր, շնորհիւ եւ ողորմությունը թող լինեն ամենեքի հեր, ամեն:

Օրհնությանը՝
ԳԱՐԵԳՐԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՋ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

30 օգոստոսի

ՀՀ կրթության եւ գիտության նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանին:

Հնորհավորելով նախարարին նշանակման առիթով՝ Վեհափառ Հայրապետը բերեց նրան արդյունավետ աշխատանքի իր բարեմալթանքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախարարին տեղեկացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից կրթության ոլորտում իրականացվող ծրագրերի մասին՝ ընդգծելով, որ Հայոց Եկեղեցին, հավատարիմ իր դարավոր առաքելությանը, շարունակում է իր կարեւոր ավանդը բերել ազգի երիտասարդության կրթության եւ հոգեւոր դաստիարակության սրբազան գործում: Այս իմաստով Նորին Սրբությունը կարեւորեց Մայր Աթոռի կառույցների եւ ՀՀ պետական պատկան մարմինների միջեւ ձեւավորված արդյունավետ գործակցությունը:

Վեհափառ Հայրապետը մասնավորապես անդրադարձ կատարեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող երեք հոգեւոր կրթական հաստատությունների եւ համակրթական դպրոցների գործունեությանը, ինչպես նաեւ խոսեց Հայաստանի տարբեր քաղաքներում հիմնադրված տասը հայոցյաց տներում մանուկների եւ պատանիների կրթության եւ օգտաշատ այլ ծրագրերի մասին:

Գարեգին Բ Հայրապետը տիար Արայիկ Հարությունյանին տեղեկություններ փոխանցեց նաեւ կրթության ոլորտում Մայր Աթոռի կողմից իրականացվելիք ապագա ծրագրերի մասին՝ հաստատելով, որ պիտի շարունակվի Հայրապետական կրթաթոշակի բաշխումն առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, ինչպես նաեւ՝ «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը:

2 սեպտեմբերի

Ս. Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Լիբանանի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման» 75 անդամների, ովքեր Մայր Աթոռ Էին ժամանել Լիբանանից, ԱՄՆ-ից եւ Կանադայից:

Հանդիպման սկզբում համախմբման ատենապետուհի Անահիտ Տանձիկյանը միության անդամներին ներկայացրեց Հայոց Հովվապետի գահակալության տարիների համապարփակ պատ-



իր հերթին ՀՀ կրթության եւ գիտության նախարարը մեծապես կարեւորեց այս հանդիպումը՝ ընդգծելով Հայոց Եկեղեցու նշանակությունը հայ ժողովրդի պատմության ընթացքում եւ Հայաստանի անկախության տարիներին: Պրն Արայիկ Հարությունյանն անդրադարձ կատարեց կրթության ոլորտում առկա խնդիրներին եւ մարտահրավերներին, խոսեց նախաձեռնվելիք բարեփոխումների մասին:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ Սփյուռքի դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման կազմակերպման եւ Հայաստանի համակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմության դասավանդման ընթացքի մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան Եպս Նավասարդյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը եւ ԿԳ փոխնախարար Հովհաննես Հովհաննիսյանը:

մությունը: Ապա իր եւ համախմբման անդամների ամունից երախտագիտություն հայտնեց Նորին Սրբությանը՝ Մայր Աթոռի հարկից ներս հյուրընկալելու համար՝ նշելով, որ համախմբման անդամներն առաջին անգամ են այցելում Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Տիկին Անահիտ Տանձիկյանը վստահություն հայտնեց, որ Հնորիվ Մայր Աթոռում կեցության, ժամերգություններին ու Պատարագներին մասնակցության՝ համախմբման անդամները հաղորդ են դառնան Մայր Աթոռից ճառագող օրհնությանը:

Ապա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շուրջ 60 տարի առաջ հիմնադրված միության անդամներին ողջունեց եւ իր հայրական օրհնությունը բաշխեց:

Վեհափառ Հայրապետը վերհիշեց, թե ինչպես է համախմբման մասին առաջին տեղեկություններն ստացել երջանկալիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսից՝ հաստատելով, որ Հայրապետը համախմբման մասին խոսելիս չէր թաքցնում իր հիացումը՝ համախմբման՝ Մայր Աթոռի հանդեպ ունեցած սիրո ու նվիրման վերաբերյալ: Նորին Սրբությունն արձանագրեց, որ իր գահակալության տարիներին ինքը եւս համայն հայության հոգեւոր կենտրոնի հանդեպ նույն դրսեւորված սերն ու նվիրումը զգացել եւ տեսել է:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ս. Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման անդամներին

Սկզբը՝ էջ 1

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ փաստեց, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքը եւ օրհնությունը բերեց միության ատենապետուհի Անահիտ Տանձիկյանին ու անդամներին՝ իրենց նախանձախնդրությամբ, հավատարմությամբ եւ մշտական զորակացության համար:

Ընդգծելով, որ յուրաքանչյուր հայորդու սիրտը կապված է Սուրբ Էջմիածնի՝ Վեհափառ Հայրապետի իր մասնավոր գնահատանքը եւ օրհնությունը բերեց միության ատենապետուհի Անահիտ Տանձիկյանին ու անդամներին՝ իրենց նախանձախնդրությամբ, հավատարմությամբ եւ մշտական զորակացության համար:

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ

իրենց երկրներ վերադարձին նրանք Մայր Աթոռից ու Հայաստանից ստացած տպավորություններին հաղորդ կդարձնեն նաեւ իրենց հարազատներին եւ մտերիմներին: Հանդիպման վերջում ներկայներն իրենց հարցերն ուղղեցին Հայրապետին, որոնք վերաբերում էին Մայր Աթոռի կրթական ծրագրերին:

Համախմբման անդամները Մայր Աթոռին ընծայեցին արծաթյա սկիհ, որի դրվագումների խորհրդաբանությունը ներկայացրեց վարպետ Տիգրան Բաջանյանը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան Եսայ Հակոբյանը:

Մեկշաբաթյա այցի ընթացքում համախմբման անդամներն ուխտագնացությունների մեկնեցին տարբեր սրբավայրեր:

6 սեպտեմբերի

Ռուսիան հայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռում ընդունեց Ռուսիայի հայոց թեմի Կոստանցաքաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Օշական քհն. հաչատուրյանի:

Տեղ Օշականը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ ուխտավոր հայորդիներից շատերն առաջին անգամ են այցելում Հա-

աստատեց, որ ռուսիան հայ համայնքը հայ ժողովրդին պարզեւել է նշանավոր եւ փառահեղ դեմքեր, որոնցից մեկը երջանակաիրտակ Վազգեն Ա Հայրապետն է: Այս կապակցությամբ Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ ռուսիան հայությունը կշարունակի Հայ եկեղեցուն մատուցվել արժանավոր զավակներ, ովքեր ներշնչված Վազգեն Վեհափառի



յաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ներկայացրեց համայնքի հոգեւոր-ազգային կյանքը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը փոխանցեց ուխտավորներին՝ կարեւորելով թեմի կողմից մեծ ուխտագնացությունների կազմակերպումը դեպի հայրենիք ու Սուրբ Էջմիածին, ինչն ավելի է սերտացնում կապը սեփական արմատների հետ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ողջունեց եկեղեցական կառույցների այն ծրագրերը, որոնք համախմբում են հայորդիներին եւ նպաստում նրանց ազգային ոգու եւ գիտակցության կերտմանը:

Վերադառնալով տարիներ առաջ Ռուսիան կատարած հովվապետական այցը՝ Նորին Սրբությունը փաստեց, որ ակնհայտ է դարձել ռուսիան հայության բարեպաշտ ոգուն ու Հայ եկեղեցու հանդեպ ունեցած անսակարկ սիրուն ու հավատարմությանը: Կաթողիկոսը խոսեց նաեւ Ռուսիայի կյանքում հայ համայնքի ունեցած պատմական կարեւոր դերակատարության մասին: Հայոց Հովվապետը

օրհնակով՝ իրենց ծառայությունը կբերեն Մայր Աթոռի շենացման եւ պայծառության գործին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ուխտավորներին՝ իրենց զավակներին դաստիարակել աստվածսիրության, հայրենասիրության ոգով եւ ազգային արժեքներով:

Հանդիպմանը Ռուսիայի հայոց միության Կոստանցայի մասնաճյուղի նախագահ Լիվու Մերդինյանը, իր խորին շնորհակալությունը հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ ջերմ ընդունելության եւ հայրական օրհնության համար, ընդգծեց, որ Կոստանցայի հայ համայնքը դարձել է շարունակ կրել եւ փոխանցել է սերունդներին ազգային ինքնության պահպանման գիտակցությունը:

Վերջում Նորին Սրբությունն իր աղոթքն ու բարեմաղթանքները բերեց ուխտավոր հայորդիներին՝ հայցելով, որ Աստված նորոգի նրանց ուխտը եւ իր առատ շնորհները հեղի նրանց վրա՝ պարզեւելով գործոց հաջողություններ, որպեսզի կարողանան առավել ծաղկեցնել իրենց համայնքն ու տիրախնամ թեմը:

8 սեպտեմբերի

Գյումրու Ս. Հակոբ եկեղեցու ուխտավորներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Շիրակի թեմի Գյումրու Ս. Հակոբ եկեղեցու ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգեւոր հովիվ Վարուժան քհն. Տերտերյանի:

Սմեայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրա-

կան օրհնությունը բերելով ուխտավորներին, ողջունեց գյումրեցիների այցը Մայր Աթոռ: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ «Գյումրի» անվան արտաբերումն առանձնակի ջերմություն է առաջացնում յուրաքանչյուր հայորդու սրտում, որովհետեւ Գյումրին այն կենտրոնն է, որտեղ պահպանվում ու փոխանցվում է հայ ազգի հոգեւոր, մշակութային դիմագիծը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ ուխտագնացությունների կարեւորությանը եւ անհրաժեշտությանը՝ հոգեւոր կյանքի զորացման համար, նշելով, որ ուխտի գնալով ուխտավորները հայոց սրբատեղիներն առատացնում են աղոթքով, աղոթքով լցնում նաեւ իրենց հոգիները: Նորին Սրբությունը հավատացյալներին հորդորեց հարատեւ մնալ աղոթքի մեջ, ամուր պահել հավատըն ու հույ-

սը, քանզի դրանց միջոցով է մարդն արարում ու պայքարում փորձությունների եւ զանազան մարտահրավերների դեմ:

Վեհափառ Հայրապետը վերադարձնեց նաեւ Գյումրու Ս. Հակոբ եկեղեցու կառուցման պատմությունը՝ ջերմ հուշեր արթնացնելով ներկաների մոտ:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը փոխանցեց Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Եսայ Աջապահյանին, ինչպես նաեւ տեղ Վարուժան քահանային՝ մեծ ուխտագնացություններ կազմակերպելու համար:

Վերջում ուխտավորները շնորհակալություն հայտնեցին Վեհափառ Հայրապետին՝ ջերմ ընդունելության, հայրական օրհնության ու հոգեշահ պատգամի համար:

10 սեպտեմբերի

ՀԲԸՄ-ի նախագահին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ-Հայաստանի նախագահ տիար Վազգեն Յակոբյանի:

Ողջունելով ՀԲԸՄ-ի նախագահի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանքով անդրադարձավ ՀԲԸՄ-ի բազմաբնույթ ծրագրերին Հայաստանում եւ Սփյուռքի համայնքներում, ինչպես նաեւ Մայր Աթոռի հետ արդյունաշատ գործակցությանը:

ՀԲԸՄ-ի նախագահը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ՀԲԸՄ-ի կողմից աշխարհի տարբեր երկրներում հայապահպանությանը եւ հայկական մշակույթի զարգացմանն ուղղված ծրագրերը: Անդրադարձ կատարվեց համահայկական մի շարք խնդիրների, որոնց թվում՝ Հայաստանում եւ Սփյուռքում Հայոց եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին: Մասնավորապես խոսվեց Սփյուռքի համայնքների կյանքում հայոց լեզվի գործածությանը հետ կապված խնդիրներին եւ հայ ինքնության պահպանման վրա դրանց ազդեցության մասին: Կարեւորվեց եկեղեցու դերակատարությունը հատկապես երիտասարդ սերնդի՝ համայնքային կյանքում գործուն

ներգրավման հարցում: Այս կապակցությամբ հատկապես ընդգծվեց ժամանակակից տեխնոլոգիաների արդյունավետ գործածությունը Հայաստանում եւ Սփյուռքի թեմերում՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելության իրականացման գործում:

Տիար Պերճ Սեդրակյանը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում մոտ օրերս բացվելիք «Հայաստան» ցուցահանդեսի մասին, որտեղ ցուցադրվելու են Հայոց եկեղեցու կողմից դարերով պահպանված 4-ից 18-րդ դարերի հոգեւոր-մշակութային գանձեր եւ սրբություններ:

Գարեգին Բ Վեհափառն անդրադարձավ ցուցահանդեսի բացառիկությանը՝ ընդգծելով, որ այն հպարտությամբ կլցնի հայորդիների սրտերը եւ աշխարհին հերթական անգամ կվկայի համաշխարհային հոգեւոր-մշակութային ժառանգության մեջ հայ ժողովրդի յուրահատուկ ներդրման մասին:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց Պերճ Սեդրակյանին ու Վազգեն Յակոբյանին՝ Մայր Աթոռին ու Հայոց եկեղեցու աշխարհասփյուռ թեմերին ՀԲԸՄ-ի շարունակական աջակցության համար:

12 սեպտեմբերի

Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին




Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներ արմ ժիլբեր-Լյուկ Դըմվինգին, արմ Պիեռ Ուզուկիասին եւ խմբի գործադիր քարտուղար տիկ. Վերոնիկ Բոկեին:

Ողջունելով խորհրդարանական պատվիրակության այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջեւ առկա ջերմ հարաբերություններին եւ դրանց առավել զարգացման գործուն

Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի կարեւոր ներդրմանը:

Նորին Սրբությունը, խոսելով երկու ժողովուրդների պատմական կապերի մասին, գնահատանքով փաստեց այն զորակցության մասին, որ Ֆրանսիայի Հանրապետության կողմից այսօր ցուցաբերվում է հայ ժողովրդին եւ Հայաստանին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրինության կարգ



Օգոստոսի 31-ին՝ 2018-2019 թթ. ուսումնական մոր տարեշրջանի նախօրեին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրինության կարգ: Կրթական ոլորտի երախտավորների օրինության այս ավանդությունը սկզբնավորվել է 2010 թվականին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ:

Արարողությանը ներկա էին Աժ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական համեմատողովի անդամներ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Վազգենյան դպրանոցի եւ Հառիճի ընծայարանի, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի տեսչական եւ ղեկավար կազմերը, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ու կրթական պետական կառույցների ներկայացուցիչներ, Երեւանի քաղաքապետարանի եւ մարզային կրթության վարչությունների ղեկավարներ, բուհերի եւ քոլեջների ղեկավարներ, Մայր Աթոռի «Եօրնեկեան համրակրթական դպրոցի» հոգաբարձուների խորհրդի եւ տնօրինության անդամներ, ՀՀ մի շարք դպրոցների եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական պատգամն ու օրհնությունը բերեց կրթության մշակներին՝ մասնավորաբար ասելով.

«Կրթության ասպարեզի հարգարժան ներ-

կայացուցիչներ, ուրախ եմք մեծապես ողջունելու ձեզ Միածնաէջ այս սուրբ տաճարում եւ Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելու կրթական գործի նվիրյալ մշակներիդ՝ մոր ուսումնական տարվա առիթով:

Գիտության ու դպրության հանդեպ սերը մեր ազգային դիմագծի անքակտելի մասն է, որ դրսևորվել է մշտապես թե՛ հայրենիքում, թե՛ նրա սահմաններից դուրս: «Ճանաչել գիմաստութիւն եւ գիտատ, իմանալ զբանս համեմարոյ»՝ հայերեն թարգմանված առաջին այս նախադասությունը Աստվածաշնչից վկայությունն է հայ հոգու անսպառ ձգտումի՝ գիտության եւ աստվածամաշողության լույսով պայծառացնելու իր կյանքը, դարձնելու առավել առաջընթաց՝ Բարձրյալի կենսապարզ եւ օրհնության ներքո:

Մեր ժողովրդի կրթասեր եւ ուսումնաստենչ այս ոգին չի տկարացել մեր պատմության ողջ ընթացքում՝ նույնիսկ պետականության բացակայության պայմաններում, օտար տիրապետությունների լծի տակ: Հակառակ բոլոր դժվարությունների՝ մեր հայրերը գիտելիքի եւ իմացության լույսը փոխանցել են սերնդեսերունդ, հետեւողականորեն դպրոցներ ու համալսարաններ հիմնել վանքերի հովանու ներքո, շարունակել մատաղ սերնդի կրթությունը՝ այն կազմակերպելով նաեւ այլ երկրներում, որպեսզի մեր ժողովուրդը անհաղորդ չմնա գիտական մտքի զարգացումներին ու ձեռքբերումներին: Ամենաանբարենպաստ թվացող պայմաններում անգամ ձեռագրեր են

գրվել, մեր Սուրբ Եկեղեցու սպասավորների ջանքերով, տպագրության գյուտից շատ չանցած, հայերեն գրքեր հրատարակվել՝ պայծառ պահելու համար հայ կյանքի անդաստանը եւ սնելու ու զորացնելու մեր ժողովրդի հոգին գիտության ու իմացության լույսով:

Սիրելիներ, 21-րդ դարում կրթության դերն առավել ու առավել է կարեւորվում ողջ աշխարհում: Բոլոր ոլորտներում՝ տնտեսություն, արդյունաբերություն, առողջապահություն եւ այլն, տեղի են ունենում մեծ փոփոխություններ, որոնք մեր հարթության վրա են դնում մարդկային կյանքը, բացում զարգացման ընդարձակ հորիզոններ: Մենք բոլորս գիտակցում ենք, որ ոչ մեծ հնարավորություններ ունեցող եւ մարտահրավերներ դիմագրավող մեր երկրում առաջնային է գիտության զարգացումը՝ որպես մեր պայծառ ապագայի երաշխիք: Արդ, նախամախնդիր ոգով պետք է շարունակենք մշտապես մոտիվ արդյունավորել կրթության ոլորտում ներդրվող բոլոր

րի մեր իրականության մեջ, մեր ժողովուրդը լծված է իր առաջադեմ ներկայի ու լուսավոր գալիքի կերտմանը, առաքելություն, որի իրագործման համար առաջնային են կրթության կարեւոր դերն ու մշակակությունը: Ժամանակակից կրթությունը, որի մատակներն եք դուք, սիրելի մանկավարժներ, չի եմբողում դարավոր մեր ազգային ժառանգության ստվերում ու խեղաթյուրում, քանզի արդիականի եւ ավանդական արժեքների կրող լինելով է, որ Մեր զավակները կարող պիտի լինեն պահպանել ազգային դիմագիծը, սահակ-մեսրոպյան ոգով մեր հայրերի կերտած դարավոր դարության լավագույն ձեռքբերումներով ունենան առաջընթացի ամուր հիմք: Կրթության մշակներիդ երախտարժան գործի բարձր գնահատանքով Մենք շարունակելու ենք «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը, ինչպես նաեւ՝ ուսանողների համար սահմանված Հայրապետական կրթաթոշակի շնորհում: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ինչպես

դարերի ընթացքում, այնպես էլ այսօր եւ ապագայում շարունակելու է իր ողջ կարողություններով նպաստել մեր երկրում կրթության ու գիտության առաջընթացին:

Մենք բարձրորեն գնահատում ենք ձեր ներկայությունն այստեղ՝ կրթության մշակների օրհնության այս նվիրական արարողությանը: Գնահատում ենք կրթության բոլոր նվիրյալներիդ եռանդուն ու անձանձիր աշխատանքը եւ մաղթում Ամենաբարձրյալն Աստծո խնամքն ու զորակցությունը:

Աղոթում ենք, որ Տերը խաղաղության մեջ պահի ու պահպանի հայրենի մեր պետությունը եւ պարգևի աշ-

ջանքերը, որ մեր երիտասարդները իրենց իմացության պաշարով մրցունակ լինեն ողջ աշխարհում եւ շենացնեն մեր կյանքը, զորացնեն մեր երկիրը, բարին ու բարիք ստեղծեն՝ հետապնդելով մեր ազգային իղծերի ու երազների իրականացումը:

Կրթական գործի սիրելի նվիրյալներ, սերունդներ կրթելու այս մեծ ու պատվաբեր առաքելությունն եք իրականացնում դուք եւ ձեր գործակիցները մեր ժողովրդի ու մեր երկրի կյանքում: Այսօր՝ մեր վերափոխումնե-

խարհասփյուռ մեր ժողովրդին մորամոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

Թող Փրկիչ մեր Տիրոջ օրհնությունը, սերը եւ շնորհը լինեն ձեզ եւ ամենքի հետ այսօր եւ հավիտյան. ամեն»:

Վերջում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, ի պատիվ կրթության մշակների, տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը վերստին իր բարեմաղթանքները բերեց արարողության մասնակիցներին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ֆրանսիայի Սենատի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին

Սկզբը՝ էջ 2

Վեհափառ Հայրապետը վերհիշեց նաեւ Ֆրանսիա կատարած իր հովվապետական այցերը, որոնց ընթացքում ականատեսն է դարձել Ֆրանսահայության աշխույժ հոգեւոր-ազգային կյանքին, ազգային ինքնության պահպանման ուղղությամբ գործադրվող ջանքերին:

Պատվիրակության անդամները, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, ընդգծեցին, որ գտնվում են մի կենտրոնում,

որը հայապահպանության երաշխավորն է, ապա խոսեցին Ֆրանսիայում հայ համայնքի հետ ունեցած փոխհարաբերությունների, ինչպես նաեւ վերջինիս առջեւ ծառացած խնդիրների, մասնավորապես՝ լեզվի պահպանման խնդրի մասին:

Զրույցի ընթացքում անդրադարձ արվեց նաեւ ներհայաստանյան վերջին զարգացումներին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

15 սեպտեմբերի

Վրաստանում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Վրաստանում հավատարմագրված տասնհինգ երկրների արտակարգ եւ լիազոր դեսպանների հետ, ովքեր համայն հայության հոգեւոր կենտրոն էին ժամանել՝ ուղեկցությամբ Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան պրն Ռուբեն Սադոյանի: Դեսպանների շարքում էր նաեւ Հայաստանում եւ Վրաստանում պապական նվիրակ հայր Խոսե Ավելինո Բեթանկուրը:

Պրն Ռուբեն Սադոյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց դեսպաններին՝ տեղեկացնելով նաեւ Հայաստան կատարած

մրանց ճանաչողական այցի մասին:

Այնուհետեւ իր բարեմաղթանքները դեսպաններին փոխանցեց Գարեգին Երկրորդ Հայրապետը՝ ողջունելով նրանց այցը Հայաստան: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, կարեւորելով նման այցելությունները, վստահություն հայտնեց, որ դեսպանները, հաղորդ դառնալով հայ մշակույթին եւ պատմությանը, հնարավորություն կունենան ավելի լավ հասկանալու Վրաստանի հայ համայնքի խնդիրները եւ մարտահրավերները:

Վեհափառ Հայրապետը խոսեց նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելության եւ հայոց կյանքում քրիստոնեական հավատի դերա-



կատարության մասին, որի շնորհիվ հայ ազգ, պատմության ընթացքում դիմագրավելով բազմաթիվ մարտահրավերների, կերտել է իր բազմադարյա պատմությունը:

Անդրադառնալով հայոց պատմության տարբեր հանգրվաններին՝ Նորին Սրբությունը մասնավորապես ներկայացրեց Հայոց ցեղասպանության հետեւանքով հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու կրած ծանր կորուստներն ու զրկանքները: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց այն երկրներին, որոնք ճանաչել եւ դատապարտել են Հայոց ցեղասպանությունը:

նը, եւ ընդգծեց, որ միայն այդ քայլը մարդկային պատմության հետագա էջերից կբացառի մամատիպ ռժրագործությունների կրկնությունը:

Հանդիպման ավարտին պրն Սադոյանը դեսպանների անունից շնորհակալության խոսք ուղղեց Վեհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռի հարկից ներս ցուցաբերված ջերմ ընդունելության համար: Վերջում դեսպաններն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ, դիտեցին դարերի ընթացքում համայն հայության հոգեւոր կենտրոնում հավաքված սրբությունները եւ մշակութային բացառիկ գանձերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Արցախի Նախագահին եւ ժողովրդին

Սեպտեմբերի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Արցախի Հանրապետության Անկախության տոնի առիթով, շնորհավորական ուղերձ է հղել Արցախի նախագահ Բակո Սահակյանին եւ բարեպաշտ ժողովրդին:

Շնորհավորագրում մասնավորապես ասվում է.

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Ձեզ, Արցախի իշխանություններին եւ բարեպաշտ Մեր ժողովրդին՝ Անկախության տոնի առիթով:

Գոհունակության, ցնծության եւ հպարտության զգացումով է այսօր լցված Մեր հոգին: Ազգովի տոնում ենք 27-րդ տարեդարձն Արցախի Հանրապետության անկախության, 27-րդ տարեդարձը արցախահայության ազատ, արժանապատիվ կյանքով ապրելու կամարտահայտության: Մեր մտապատկերում վեր են հառնում դժվարին տարիներն արցախյան գոյապայքարի: Առ Աստված ապավինությամբ ազգս հայոց ոտքի կանգնեց պաշտպանելու իր արդար իրավունքները հայրենի պատմական Արցախում՝ փաստելով, որ Հայոց ցեղասպանությամբ հայ ժողովրդի համար բացված 20-րդ դարը չի կարող մայր մտնել նույնպիսի ոճրագործությամբ: Հաղթանակեցին հայրենիքի հանդեպ անմնացորդ սերն ու նվիրումը: Մեր ժողովրդի արի զավակներն արյան գնով ու անօրինակ սխրանքներով ազատագրեցին հայրենի հողը: Արցախյան հերոսամարտը պսակվեց հռչակումով անկախ պետականության, մի ճանապարհ, որին արցախահայությունը ոտք դրեց գալիք բոլոր դժվարությունների եւ փորձությունների քաջ գիտակցությամբ եւ մարտահրավերներին դիմագրավելու համաձայնությամբ:

Փառք Աստծո, հակառակ ամենածանր պայմանների, բազում դժվարությունների ու նեղությունների, պատերազմի վերսկսման մշտական սպառնալիքի՝ Մեր զավակները, ազատության արժեքի ամենաբարձր գիտակցությամբ, իրենց արժանապատիվ կյանքը կերտեցին եւ շարունակում են իրենց նախնյաց քաջարի, անկոտրում ոգու եւ հավատի կրողը մնալ: Մենք հպարտ ենք Արցախի Մեր սիրեցյալ ժողովրդով եւ աջակից՝ նրա հայրենաշեն ու ազգանվեր ծրագրերին: Մշտապես աղոթում ենք նրա խաղաղ, բարօր եւ արգասաբեր կյանքի համար:

Մեծարգո՝ Նախագահ, բարձր ենք գնահատում Արցախի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանն ուղղված Ձեր նվիրումն ու անդով ջանքերը եւ Արցախի մեր բարեպաշտ ժողովրդի իղձերի իրականացմանը միտված ծրագրերը:

Աղոթում ենք, որ Բարձրյայն Աստված Իր Սուրբ Աջով խաղաղ երկնքի ներքո բարօր պահպանի մեր Արցախ աշխարհը, միասնական ու համախումբ պահի արցախահայությանը՝ պարգեւելով անվրդով ու ապահով, շեն ու պայծառ կյանք:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթել է, որ մշտապես զորանա հավատքը, եւ անպարտ մնա ոգին Պաշտպանության բանակի հերոս զինվորների ու հրամանատարների՝ անառիկ պահպանելու հայրենյաց սահմանները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ռ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոն



Սեպտեմբերի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ տիկին Աննա Հակոբյանի հետ այցելեց ՀՀ ԱՆ պրոֆեսոր Ռ. Օ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոն:

Վեհափառ Հայրապետին մուտքի առջեւ դիմավորեցին կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բ. Գ. Սամվել Դանիելյանը, «Սիթի օֆ սմայլ» հիմնադրամի խորհրդում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ, Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Եսս Գալստամյանը, կենտրոնի բժշկական ղեկավար կազմը եւ այցելու հովիվ Առնակ քհն. Հարությունյանը:

Նորին Սրբությունը եւ ՀՀ վարչապետի տիկինը այցելեցին կենտրոնի մանկական բաժանմունքում բուժում ստացող տասնվեց մանուկների եւ պատանիների: Իր օրհնությունը եւ շուտափույթ ապաքինման բարեմաղթանքները փոխանցելով երեխաներին՝ Վեհափառ Հայրապետը նրանց ընծայեց մանկական Աստվածաշնչեր եւ մանրանկարներով զարդարված խաչեր:

Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի կողմից այցի

կանխարգելմանը նպաստելուն կոչված նախաձեռնությունները՝ վստահեցնելով, որ Հայոց Եկեղեցին պիտի շարունակի պարբերաբար աջակցել եւ զորակցել նման ծրագրերին՝ օգնելու երեխաներին վերադարձնել իրենց ժպիտն ու հոգու ուրախությունը եւ ապահովելու նրանց համար անվրդով եւ երջանիկ մանկություն:



Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների խորհրդի Պասվիրակությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Սեպտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն Հայնրիխ Եպիսկոպոս Բեդֆորդ-Շտրոմի հանդիպումը:

Վերջինիս գլխավորած պաշտոնական պատվիրակությունը ժամանել էր Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով: Հրավերն ուղղվել էր 2017 թ. հոկտեմբերին, երբ Նորին Սրբությունը Եվրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյակի տոնակատարությունների շրջանակում այցելել էր Գերմանիա:

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ պաշտոնական խոսքերի փոխանակում: Նորին Սրբությունը եւ Հայնրիխ Եպիսկոպոս Բեդֆորդ-Շտրոմը տեղի ունեցած զրույցի եւ քննարկումների ամփոփման արդյունքում վերահաստատեցին պատրաստակամությունը՝ խթանելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների խորհրդի միջեւ առկա կապերը եւ զարգացնելու հետագա գործակցությունը:

«Այսօր, ավելի քան երբեւէ, մենք ակամատես ենք տեղի ունեցող մի իրողության, շարունակական ընդհարումների եւ անարդարությունների՝ ազգային, տնտեսական, քաղաքական եւ կրոնական հարթության վրա, որի պատճառով քրիստոնեական տարբեր հարանվանությունների միջեւ համագործակցությունը եւ ընդհանուր առաքելության անհրաժեշտությունը, ինչպես նաեւ միասնական ջանքերի

համախմբումը՝ ժամանակակից մարտահրավերներին ընդհանուր աղոթքով դիմակայելու համար, դառնում են հրամայական:

Այսօր մեր երկու եկեղեցիների միջեւ ընդհանուր առաքելության ու համագործակցության ամրապնդման նպատակով կոչ ենք անում մեր եկեղեցական սպասավորներին

վաճաբանական պատրաստությանը՝ ճանաչելու մեր երկու եկեղեցիների դարավոր ավանդույթները եւ աստվածաբանական-եկեղեցական առանձնահատկությունները,

2. հատկապես տեղական համայնքների մակարդակում ջանքեր գործադրել՝ մեր հավատի ընդհանուր վկայության գործում



եւ հավատացյալներին համագործակցելու մեր միասնական քրիստոնեական առաքելության զորացման գործում:

1. խրախուսել եւ նպաստել կրթության զարգացմանը եւ հոգեւորականների աստ-

միմյանց միջեւ համագործակցությունն ամրապնդելու եւ հիմք ստեղծելու Արեւելյան Ուղղափառ եւ Բողոքական Եկեղեցիների ընդհանրության միջեւ առկա միջեկեղեցական երկխոսության հետագա զարգացման համար,

3. աշխարհի տարբեր կողմերում, հատկապես Մերձավոր Արեւելքում, տեղի ունեցող հակամարտությունների համատեքստում համագործակցել՝ պահպանելու համար բազմադարյա քրիստոնեական պատմական ներկայությունն այդ տարածաշրջանում եւ սոցիալական տարբեր ծրագրերի միջոցով նպաստելու փախստականների ներգրավմանը եւ ինտեգրմանը նոր հասարակություններում:

Մենք միասին աղոթում ենք, որ աշխարհի բոլոր հավատացյալների սրտերում ու մտքերում փոփոխություն տեղի ունենա, եւ հորդորում ենք ազգերի առաջնորդներին ու նրանց, ովքեր կարող են դրական փոփոխություններ կատարել աշխարհում, լսել խնդրանքները միլիոնավոր մարդկանց, ովքեր ձգտում են աշխարհում խաղաղության եւ արդարության հաստատմանը, ավելի շատ ջանքեր գործադրել աշխարհում տարբեր էթնիկ եւ կրոնական համայնքների միջեւ խաղաղ գոյակցության զորացման եւ հակամարտությունների խաղաղ կարգավորման համար:

Թող Սուրբ Հոգին՝ Մխիթարիչը եւ ճշմարտության Հոգին, որ առաջնորդում է մեզ ողջ ճշմարտության մեջ (Հովհ. ԺՁ 13), ամրացնի բոլոր ջանքերը՝ Եկեղեցիների միջեւ սիրո ու եղբայրության կամուրջներ կառուցելու համար: Սուրբ Էջմիածնից մենք կոչ ենք անում մեր բոլոր հավատացյալներին միանալ մեզ աղոթքով եւ փառաբանել անբաժանելի Սուրբ Երրորդությանը. այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Հանդիսություն՝ նվիրված Լիբանանի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր սիկնանց համախմբմանը»



Սեպտեմբերի 7-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Լիբանանի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբմանը»։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով համախմբման 75 անդամներ Լիբանանից, ԱՄՆ-ից եւ Կանադայից օրեր առաջ ժամանել էին Մայր Աթոռ։

Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի սաներ եւ այլ հրավիրյալներ։

Հանդիսությունը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, որից հետո «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր տիար Հակոբ Ավետիքյանն անդրադարձ կատարեց համախմբման հիմնադրմանը, մասնակիցներին ներկայացրեց կրոնասեր տիկնանց միության գործունեությունը՝ փաստելով նրանց մշտական հավատարմությունը Հայոց Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Այնուհետեւ ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց համախմբման ատենապետուհի տիկին Անահիտ Տանձիկյանը՝ ընդգծելով, որ այս մեկշաբաթյա կեցությունը Սուրբ Էջմիածնում եւ այցելությունները Հայաստանի տարբեր սրբավայրեր առավել զորացրեցին իրենց հավատքն առ Աստված եւ նվիրումը Հայոց Եկեղեցուն։ Ապա համախմբման ատենապետուհին անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մայր Աթոռի գործունեությանը՝ կրթական, սոցիալական, մշակութային, բարեգործական եւ ընկերային կյանքի ոլորտներում՝ ամենքի անունից Հայոց Հոգևորական փոխանցելով կենաց արեւշատության եւ արդյունաշատ գահակալության բարեմադրանքները։

Այնուհետեւ ցուցադրվեց «Շողակաթ» հեռուստաբեմադրության կողմից Լիբանանի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց հա-

մախմբման» եւ նրա անդամների՝ Հայաստան այցի մասին պատրաստված ֆիլմը։

Ապա միջոցառման ներկաներին իր օրհնության խոսքը բերեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Վեհափառ Հայրապետն արձանագրեց, որ «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբմանը» նվիրված հանդիսությունը կոչված է վերստին արժեւորելու ազգային-եկեղեցական կյանքում համախմբման անդամների որդիական սիրտ եւ նվիրումի ոգին ու երախտարժան վաստակը։

«...Միության անդամուհիները ժամանել են հայրենիք եւ Մայր Աթոռ՝ նորոգելու մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ ծառայամվիրումի իրենց ուխտը, որով առաջնորդվել եւ զորացել են տասնամյակների եկեղեցանկապատ իրենց գործունեության մեջ։

«Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումը» հիմնվեց 1959 թվականին, երբ սառը պատերազմն իր ցավալի ներգործությունն ունեցավ եկեղեցական մեր կյանքում՝ տազնապներ ստեղծելով Ամենայն Հայոց Հայրապետության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հարաբերություններում։ Այդ դժվարին օրերին լիբանանահայ մի խումբ քաջասիրտ հայուհիներ անմնացորդ սիրով ամուր պահեցին եւ վկայեցին իրենց հավատարմությունն ու նախանձախնդրությունը՝ հանդեպ քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածնի։ Տասնամյակներ շարունակ ազնվահոգի հայուհիներն իրենց առաքինի գործունեությամբ արժեւորել են ազգային-եկեղեցական մեր անդաստանում կանանց բարձրապատիվ դերն ու սպասակրությունը՝ նմանություն բերելով սուրբ Եղիշե պատմիչի կողմից ներբողված հայոց աշխարհի փափկատուն տիկնանց։ Բարեսիրական իրենց բեղուն գործունեությամբ

նրանք անփոխարինելի ծառայություն են մատուցել եւ կարեւոր նպաստ բերել մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավետ պայծառությանը։

Միտելի անդամուհիներ «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման», ուրախություն է Սեզ համար, որ նվիրյալ հայուհիները, շարունակելով միության հիմնադիր երանյալ անդամուհիների, ձեր երախտարժան մայրերի բարի ավանդը, այսօր էլ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունն առավել արդյունավորելու ազնվագույն տեսլականով հարստացնում եք ձեր վաստակը նորանոր իրագործումներով։ Ձեր ջանքերով ու միջոցներով ստեղծված եկեղեցական զգեստներն ու սպասքը եւ եկեղեցու հարդարանքի այլ գեղեցկակար պարագաները շուրջ ու վայելչություն են հաղորդում եկեղեցական արարողություններին ու ծիսակատարություններին եւ նպաստում հոգեւոր-եկեղեցական կյանքի բարեգարությունը։ Ձեր եռանդն ու նվիրումը քաջալերում են նաեւ ձեր ամուսիններին՝ իրենց ջանքերով սատար ու զորակից լինելու ձեր բարի առաքելությանը։ Գովարժան է

նոր մարտահրավերների առջեւ, մեր Եկեղեցին ու երկիրն առավել չափով կարիքն ունեն իրենց զավակների աջակցության։ Քրիստոնյայի համար անկարելի է մնալ դիտորդ, երբ Եկեղեցին ու հայրենիքը իր զորակցության անհրաժեշտությունն ունեն, երբ փորձեր են արվում քարկոծելու եւ վնասելու Եկեղեցին, նսեմացնելու հոգեւոր-բարոյական արժեքները, խարխուլելու մեր ինքնության հիմնասյուները՝ Եկեղեցին ու ընտանիքը։ Եկեղեցու առջեւ ծառացող բոլոր մարտահրավերները հաղթահարելի են Եկեղեցու հետեւորդների՝ դավանված արժեքների հանդեպ հավատարմությամբ եւ հոգեւոր կյանքում ակտիվ ներգրավվածությամբ։ Ձեզանից, ամեն մի հայ կնոջից է նաեւ մեծապես կախված մեր Եկեղեցու, մեր ժողովրդի ու մեր երկրի ապագան, քանզի հավատավոր ու բարեպաշտ կանայք են հայ ընտանիքի սյունը, հոգեւոր ու բարոյական արժեքների սնուցողը, զավակների նկարագրի կերտողը»,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Վերստին հայրապետական իր բարձր գնահատանքն ու օրհնությունը բերելով համախմբման երախտարժան անդամներին՝ Նորին Վեհափառությունը հորդորեց նույն կորովով ու եռանդով շարունակել իրենց կարեւոր առաքելությունը՝ ի շինություն մեր հայրենիքի եւ Ս. Եկեղեցու, ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ի փառս Բարձրյալն Աստծո։

Նորին Սրբությունն աղոթքով հիշեց «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբման» լուսահոգի հիմնադիրներին, ատենապետուհիներ Արշալույս Այվազյանին եւ Անգինե Տանձիկյանին, առանձնակի գոհունակությամբ իր գնահատանքը, սերն ու օրհնությունը բերեց տիկնանց համախմբման պատվավոր ատենապետուհի Միմի Հարությունյանին եւ գործող ատենապետուհի Անահիտ Տանձիկյանին, ովքեր մեծ ավանդ ունեն համախմբման եկեղեցանկապատ ծառայության մեջ։

«Մաղթում ենք ձեզ, սիրելի անդամուհիներ, երջանկություն եւ եկեղեցաշահ գործոց նոր հաջողություններ։ Հայրատ ենք ձեր հավատով եւ առ Եկեղեցին ձեր անխախտ սիրով։ Թող Ամենակարող

Աստծ օրհնությունն ու աջակցությունը միշտ ուղեկից լինեն ձեզ եւ համայն մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս»,- վերջում հավելեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Հանդիսությունը հայրենասիրական, ժողովրդական եւ հոգեւոր երգերով համեմեցին «Նոր անուններ» ծրագրի շնորհալի պատանի երաժիշտ-կատարողները՝ ղեկավարությամբ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սիլվա Մեքինյանի։



նաեւ, որ միության շարքերում ներգրավում եք ձեր դուստրերին եւ երիտասարդ օրիորդաց, որպեսզի նրանք եւս ձեր հավատքի, բարեպաշտության ու աստվածահաճո բարեգործությունների վառ օրինակով իրենց ջանքերը բերեն հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանի բարեգարդման համար։ Հիշակի, Եկեղեցին զորեղ ու պայծառ է իր զավակների ամուր հավատքով ու նվիրյալ գործերով։ Այսօր եւս, երբ ազգովի կանգնած ենք

Վարդապետական լանջախաչի շնորհում Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Օգոստոսի 31-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վարդապետական լանջախաչ շնորհեց Տիրայր վրդ. Հակոբյանին։ Վերջինս, երկու օր առաջ բարեխաչող կերպով պաշտպանելով իր վարդապետական թեզը, օգոստոսի 30-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում արժանացել էր վարդապետական մասնավոր չորս աստիճաններին։

Նորընծա վարդապետին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց Մայր Աթոռի լուսարարապետ Հովհանն Եսս Հակոբյանը՝ հայցելով Հայոց Հոգևորական օրհնությունը։

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը բերելով Տիրայր վարդապետին, անդրադարձավ վարդապետական աստիճանի կարեւորությանը։ Նորին Սրբությունը նշեց, որ պատմության ընթացքում վարդապետները կրթել, դաստիարակել ու առաջնորդել են մեր ժողովրդի զավակներին, եւ այսօր էլ նրանց վրա դրված է նույն պարտականությունը։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ կրթյալ եկեղեցականաց նոր սերունդն է այսօր իր նվիրյալ ծառայությունը բերում հավատացելոց՝ բարձր պահելով Հայոց Եկեղեցու հեղինակությունն ու բարի անունը։

Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքը բերեց հայր Տիրայրին՝ իր անձնորդի ծառայության համար՝ իույս հայտնելով, որ վերջինս չի բավարարվի այս գովելի ձեռքբերումով եւ կշարունակի իր կրթությունն ու գիտական ուսումնասիրությունները։

Վերջում Նորին Սրբությունը իր օրհնությունը բաշխեց նորընծա վարդապետին՝ մաղթելով Սուրբ Հոգու առաջնորդությունն իր հոգեւոր ծառայության մեջ։

Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի նիստում քննարկվեց Մայր տաճարի հիմնանորոգության ընթացքը

Սեպտեմբերի 14-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական խորհրդի նիստը, որում քննարկվեց Մայր տաճարի ամրակայման եւ հիմնանորոգության աշխատանքների ընթացքը։

Ողջունելով ճարտարապետական խորհրդի անդամներին՝ Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը հայտնեց Միածնաէջ տաճարի նորոգման աշխատանքների ընթացքի եւ առկա խնդիրների վերաբերյալ մասնագիտական քննարկման նպատակով՝ նիստին մասնակցելու իրավունքին ընդառաջելու համար։ Նորին Սրբությունը գնահատանքով ընդգծեց այս ընթացքում համայն հայության սրբություն սրբոցի նկատմամբ ճարտարապետների եւ շինարարների մասնավոր ուշադրությունը։

Ժողովին նախագծի գլխավոր կոնստրուկտոր, դոցենտ, տ. գ. թ. Ա. Արզումանյանը նիստի մասնակիցներին ներկայացրեց Մայր տաճարի նորոգման եւ մասնակի ամրակայման կատարված աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր հանգամանքներն ու խնդիրները եւ դրանցից բխող նախագծային լրամշակումներն ու առաջարկները։

Խորհուրդը մասնավոր քննության առավ Մայր տաճարի ներքին կոնստրուկցիաների ամրացումների ընթացքում առաջացած խնդիրների լուծումների, հարավային զանգակատան հետագուտական աշխատանքների արդյունքների հիման վրա հենարանային մասի կոնստրուկցիաների ամրացումների եւ արեւելյան զանգակատան կոնստրուկտիվ համակարգի վերականգնման առաջարկությունները։

Քննարկումների արդյունքում ճարտարապետական խորհուր-



դը, հիմք ընդունելով Մայր տաճարի նորոգման եւ մասնակի ամրակայման աշխատանքների ընթացքում կատարված հետազոտական եւ լրամշակված նախագծային հիմնական լուծումները եւ հաշվի առնելով տաճարի հոգեւոր եւ պատմամշակութային բացառիկ արժեքը, հեղինակային խմբին թելադրեց կոնստրուկտիվ միջամտությունների պարագայում հնարավորինս զերծ մնալ կառույցի առավելագույն ամրացմանը միտվող էական կոնստրուկտիվ փոփոխություններից եւ պահպանել քարե կոնստրուկցիաների ավանդական աշխատանքային սկզբունքը։

Լրատվական ճյուղերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809-1848)

ԱՐՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ԴԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12, 15-16

Վեպը հեռավոր մեր նախնիների եւ նոր ժամանակների իրական հերոսների հայրենամարտի ու անձնագործ քաջության օրինակով ներկա եւ գալիք սերունդներին դաստիարակելու, անցյալն արդիականության շահերին ծառայեցնելու առաջին լուրջ քայլն էր հայ գեղարվեստի պատմության մեջ, եւ սա Արովյանի բերած կարեւոր գրական-պատմական նորություններից մեկն էր։ Այս ավանդույթն արդեն նախադեպ էր եւ իր դրսևորումն ունեցավ հետագա ժամանակների հայ պատմագեղարվեստական ստեղծագործություններում։

Խնդիրը նկատել են դեռեւս վեպի առաջին գնահատողները։ Մ. Նալբանդյանի հետ գրեթէ միաժամանակ՝ մենք հրապարակախոս Ստ. Ոսկանն առաջիններից էր, որ Ձմյուռնիայում իր խմբագրությանը լույս տեսնող «Արեւմուտք» պարբերականի 1859 թ. համարներից մեկում Արովյանի եւ նրա նոր հրատարակված «Վերջ Զայաստանի» վեպի մասին գրեց մի ընդարձակ հոդված։ Այստեղ նա անթաքույց հիացմունքով է խոսել Արովյան գրողի ինքնատիպ անհատականության մասին եւ կարեւորել նրա դերը մեր ժողովրդի գեղարվեստական մտածողության զարգացման մեջ։ Եվրոպական վիպագրությանը քաջածանոթ հրապարակախոսը բնավ չի վախեցել Արովյանի վեպի առաջին գլխի ռեալիստական զուսմագեղ հատվածները համեմատել բաղկայան արձակի պատկերա-

վորության հետ։ Ստ. Ոսկանը կարծիք է հայտնել նաեւ, թե այդ վեպը արեւելյան տիպի գրվածք է, եւ չի կարելի գնահատել եվրոպական վեպի չափանիշներով, որովհետեւ այն գրված է ռամկի լեզվով եւ ռամկների համար։

Այս կարծիքը չի ընդունել Մ. Նալբանդյանը։ Լուսամիտ այս գործիչն ավելի հիմնավոր գնահատական է տվել Արովյանին՝ նրան Պռուշյանի հետ միասին համարելով «արդյան ազգային վիպասանության հիմնադիր» (Այս էլ թող հիշեն հայ նոր գրականության հիմնադիրն 17 կամ 18-րդ դարերում որոնողները)։ Զակարվելով Ստ. Ոսկանին՝ Նալբանդյանն ընդգծել է, որ Արովյանը հայ իրականության մեջ՝ հատկապես երիտասարդության շրջանում, արմատավորել է արեւելյան ծուլության ու դանդաղկոտության դեմ ուղղված մի շարժում, եւ նրա վեպը ոչ միայն ռամկորեն ու ռամկների համար է գրված, այլեւ, ամբողջ ժողովրդի համար գրված լինելով, առաջադեմ գաղափարական միտումներով արթնացնում է հայ երիտասարդությանը, բարձրացնում ամբողջ ազգին։ Ուրեմն՝ վեպն իր էությանը հակադիր է ասիական անշարժությանը եւ առավել հարազատ է հենց եվրոպական մտածողությանը, ուստի հենց այդ չափանիշներով էլ պետք է գնահատել այն։

Թե՛ Ստ. Ոսկանը, թե՛ Մ. Նալբանդյանը անդրադարձել են երկի բովանդակությանն ու գեղարվեստական արժանիքներին։ Ստ. Ոսկանի համոզմամբ՝ այդ վեպն ունի բովանդակային արտակարգ հագեցվածություն եւ տարագիր հային կարող է լիակատար պատկերացում տալ բուն Զայաստանի ժողովրդական կյանքի ու կենցաղի, մարդկային հարաբերությունների մասին։ Մի արձանիք է սա, որ բացակայում էր ժամանակի գրական մյուս ստեղծագործություններում։ Բայց նա վեպին հատուկ է համարում նաեւ գերմանական ճապաղությունը, արեւելյան դանդաղկոտությունը եւ «առավելությունը» (այսինքն՝ չափազանցությունը)։

Մ. Նալբանդյանը, «Մեռելախարցուկ» վեպի տողատակի ծանոթագրություններից մեկում բարեկիրթ բանավեճ մղելով Ստ. Ոսկանի հետ, Արովյանի վեպին տվել է առավել ընդհանրական, խոր ու դիպուկ գնահատական, որը կողմնորոշիչ է նաեւ այսօրվա տեսանկյունից. «Այդ աշխատության մեջ (նկատի ունի Արովյանի վեպը - Ս. Մ.) մարմին է առել ազգի հո-

գին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։ Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է տալիս բանաստեղծը հայոց ընտանեկան կյանքի տխուր պատկերները...» (Նալբանդյան Մ., Երկեր, Զայ դասականների գրադարան, Եր., 1985, էջ 196)։ Վեպը նա համարում է մի մեծ հանդիսարան, «ապրումյան մի հայելի», որի մեջ «մենք տեսանում ենք հայկական կյանքի մեռած պատկերը, տեսանում ենք, թե ինչպես այդ մեռելային դաշտի զանազան կետերում խլրտվում է առաքինությունը եւ նահապետական կամ հովվական կյանքի հասկացողությամբ ընդդեմ է գինվորագրվում այս կամ այն ամարդարության, թե ինչպես հալածվում է այս առաքինությունը ու պատճառ դառնում բյուր կաթիլներով արտասուքի»։ Պատկերվում են իրադարձություններ ու անձինք, իսկ գործողությունների կենտրոնում Աղասին է՝ իր ընկերներով, կրակոտ այդ մարդկանց երակներում հոսում է հայության ջերմ արյունը, արժանապատիվ վրիժառության ոգին է նրանց մեջ, սակայն, ցավոք, Աղասու ընկերների ոգին «ընդհանրական չէ ամբողջ ազգին», այլ «այս ջերմարյուն տղամարդիկը շրջապատված էին սառնարյուն մարդերից», եւ սա է Զայաստանի գլխավոր վերքը։ Դրանով արդարացվում է վեպի վերնագիրը՝ «Վերջ Զայաստանի, որը հայրենասիրի»։ Զայրենասերը հեղինակն ինքն է, որը մնան է այն սրտացավ բժշկին, ով բուժումն սկսելուց առաջ նախ կատարում է հայության մարմնամասերի համակողմանի ստուգում-զննություն եւ բացահայտում վերքերի ու խոցերի իրական պատճառները։

Տարբեր առիթներով եւ հատկապես «Ամենքը միասին» հոդվածում վեպի եւ Արովյանի մասին գերազույց է հիացումներով է արտահայտվել Զովհ. Թումանյանը։ Նա էլ Նալբանդյանի ման «Վերջ Զայաստանի» վեպի գլխավոր արժանիքը համարել է նրա ազգային բնույթը՝ այն անվանելով ազգային գրականության մի բացառիկ եւ օրինակելի նմուշ եւ մատնացույց է արել հեղինակի ու մեր ժողովրդի սրտի վերքը։ 1910-ական թթ. Թիֆլիսի հայ թերթերը հայտարարություն էին տարածել, թե ազգի մեծահիշատակները փող պիտի տրամադրեն Արովյանի արձանը կառուցելու համար։ Դա մի մարդու արձան չէ, որ միայն հարուստների դրամով կառուցվի, - հակադրվում է Թումանյանը, - դա մեր ողջ ժողովրդի «վերքոտ սրտի արձանն է», որի կառուցմանը պետք է մասնակցեն բոլորը՝ աստվածաշնչյան այրի աղքատ կնոջ նման իրենց փոքրիկ լուծման ներդնելով։ Եվ այդ արձանը պիտի կառուցվի «հենց այստեղ՝ Արարատյան դաշտում,

սերունդներին ի տես, որպեսզի բոլորը տեսնեն, թե քանի թուր կա ցցված նրա վերքոտ սրտում»։ Մի այդպիսի արձան էլ հայ ժողովուրդը, ըստ Թումանյանի, պարտավոր է կառուցել «այնտեղ՝ Վանա ժայռերի բարձրության վրա, որ ի խորոց սրտի հավերժ հնչի «Չայն հառաչանազ հեծության սրտի, ողբոց աղաղակի... Որ կատարյալ լինի»։ Թումանյանական խոսքում ականա զուգահեռվում ու համակշռվում են երկու հզորագույն երևույթներ՝ Նարեկացին ու Արովյանը, «Նարեկն» ու «Վերքը»։

«Վերջ Զայաստանի» վեպի խորապես ազգային բնույթն է ընդգծել նաեւ ականավոր գեղագետ ու բանաստեղծ, «Անահիտ» հանդեսի երկարամյա խմբագիր Արշակ Զուպանյանը։ Նա հատկապես գնահատել է վեպի ժողովրդական կյանքը պատկերող բացառիկ ուժը եւ նրան պարզապես տվել «ժողովրդական դյուցազնավեպ» ժանրային անվանումը։ «Վեպը ծայրենայր ամբոխ կզովի, անոր մթին վայրագությունն ու վիթխարի խեղճությունը, անոր միանությունը... անոր վսեմությունն ու անոր գրեհկությունն ալ, անոր մորիկներուն ու շեղջակուտված դանդաղությունն ալ»։

Վեպի ժանրին անդրադարձած հեղինակություններից չի կարելի անտեսել եւ ականավոր գրող Դ. Դեմիրճյանի կարծիքը։ Վեպի գրության 100-ամյակի առթիվ նա համոզեւ է եկել մի հոդվածով, որի մեջ, ընդհանուր գնահատական տալով Արովյանին, խոսում է նրա կիրառած գրական ժանրերի եւ հատկապես «Վերքի» ժանրային բնույթի մասին։ Դեմիրճյանն արձարծում է նաեւ սրան առնչակից անչափ կարեւոր մի խնդիր՝ Արովյանի ոճի հարցը։ Ականավոր գրողի ելակետը Արովյանի ինքնախոստովանությունն էր. այն, որ նա «Հառաչաբանում» գրել է, թե «քիչ է մնում մի աշուղ էլ ես դառնամ»։ Գրողի համոզմամբ՝ սա վկայում է, որ Արովյանին բովանդակության հետ միասին մտահոգել է նաեւ ձեւի եւ արտահայտչականության խնդիրը, ուրեմն՝ նաեւ վիպական ժանրի խնդիրը, որով նա հասկանալի կդառնար հայ հանրությանը։ Իսկ Արովյանի այն բանաձեւը, թե «Լեզուն դարտակ խոսք չէ, այլ հոգին ա մարդուն», արդարացնում է գրողի այդ մոտեցումը։ Սակայն Դեմիրճյանը թույլ է տալիս մի ակնհայտ ծայրահեղություն՝ վեպը մեմենցնելով կամ մոլանցնելով արեւելյան հայտնի սիրավեպերի հետ։ Ճիշտ է, կանխազգուշացնում է, որ իրեն ուղղակի խնաստով չպետք է հասկանալ, դրանք ինքն ընդամենը համարել է «Վերքի» նախորինակներ, սակայն ժողովրդի մեջ մի ժամանակ լայն տարածում գտած հեքիաթ-սիրավեպերի՝ «Ալի եւ Քարամ», «Աշուղ Ղարիբ», «Լեյլի եւ Մեջնուն», «Աղվան եւ Օսան» եւ այլն, անմիջական մեմանություններ տեսնելը, մանավանդ որ դրանք չունեն Արովյանի վեպի հայրենասիրական ուղղվածությունն ու բացառիկ հերոսական ոգին, գրողի վրիպումն է։ Այնուամենայնիվ, Դեմիրճյանը նկատել է, որ Արովյանի հզոր տաղանդի շնորհիվ վեպը ձեռք է բերել հայրենասիրական հարուստ բովանդակություն եւ հատկապես ունի ազգային դրոշմ։

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆ ՍՈՒՐՈԺՍԿԻ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու։


Որքան հրաշալի եւ որքան սարսափելի է անառակ որդու մասին առակը, որը մենք այդքան լավ գիտենք, այդքան լավ հիշում ենք, եւ որն ամեն տարի մեզ է վերադառնում նոր ուժով, ուժ, որը ծնվում է մեղքի ավելի ծանր եւ տանջալից փորձից, աստվածային շնորհի ավելի զարմանալի գիտակցությունից եւ նրանից, թե ինչպես է մեզ ընդունում եւ բարձրացնում Աստված։

Այս առակը մեղքի բազում ձեւերի եւ միաժամանակ բուն մեղքի բնույթի մասին է։ Առակը սկսվում է մեղքով՝ իր մերկությանը, իր բացարձակությամբ, իր վայրի անողորմությանը։ Կրտսեր որդին գալիս է հոր մոտ. նա լի է ուժով, լի է ցանկություններով, լի է ապրելու փափագով, եւ այդ փափագը, այդ ցանկությունը, այդ կիրքը չեն համատեղվում սովորական, տնակյաց կյանքի չափանիշների հետ։ Նա այլն սպասել չի կարող եւ ասում է հորը. «Հայր, դու երկարակյաց ես, մինչեւ մահանաս, իմ մեջ կմարի կյանքը, այն ընթացքում, երբ դու ապ-

րես ու ապրես եւ ոչ թե մահանաս, եւ կթոշնես։ Մահացիր, մահացիր իմ համար, եղիր մեռածի պես։ Դու ինձ պետք չես, բայց այն, ինչ ես կարող եմ քեզանից ստանալ, ես հիմա կարող եմ ստանալ։ Այն, ինչ դու հետո կկուտակես, ինձ պետք չէ. այն, ինչ մինչեւ հիմա ես կուտակել՝ աշխատանքով, սիրով, հոգու սխրանքով, այդ ամենը հիմա բաժանիր եւ ողոր ինձ իմ բաժինը. իսկ հետո ողջ կլինես թե ոչ, ինձ համար միեւնույն է։ Իմ առջեւ կյանքն է»։

Այդպես էլ մենք ենք վարվում Աստծո նկատմամբ. ոչ այդքան կոպիտ, ոչ այդքան ուղիղ, բայց նույնքան դաժան։ Աստծուց վերցնում ենք ամեն ինչ եւ տանում ենք հեռավոր երկիր՝ ամեն ինչ մսխելու եւ վայելելու։ Մոռանում ենք նույնիսկ, որ Նա գոյություն ունի, Նա մեզ համար կարծես մահացած է այն պահից, երբ մենք Նրանից ստացել ենք այն ամենը, ինչ պետք էր, որպեսզի ապրենք այս հեռավոր եւ կործանարար երկրում։ Եվ գնում ենք. եւ ապրում ենք. եւ հարուստ ենք որոշ ժամանակ, իսկ հետո աղքատանում ենք. սպառվում է

երկնային արքայությունից գողացվածը, խլվածը, խմայվածը, մսխվելիքը։ Քանի դեռ մենք հարուստ ենք նրանով, ինչը Հայրն է տվել, մեզ շրջապատում են հենց այնպիսիները, ինչպիսին որ մենք ենք, որոնց համար ոչ մի արժեք չունենք, միայն թե ուրիշի հաշվին ապրեն՝ լինի մեր սիրով, մեր անհոգությամբ, մեր մարդկային ջերմությամբ, խելքով, սրտացավությամբ, այն ամենով, ինչը մենք ունենք, ինչ էլ որ դա լինի։ Իսկ երբ ամեն բան սպառվի, ամեն բան վատնվի, ինչը հայրական տնից էր, Աստծուց էր ստացված, ապա մեզանից կհեռանան, որովհետեւ նույն այդ օրերնքը, որը մենք կիրառել ենք Հոր նկատմամբ, գործում է նաեւ մեզ համար։ Մենք Նրա համար չենք անհամգստանում, միայն թե ստանանք այն, ինչը Նա կարող է տալ, եւ ուրիշներն էլ մեր մասին չեն անհամգստանում, միայն թե օգտագործեն այն, ինչը մենք ունենք տնից, հայրական հարստությունից։ Եվ որքան հաճախ ենք տալիս ամենաթանկարժեքը՝ որպես անարժեք մի բան, այնպիսները, որոնք պետք



է պահվելի մեր սրտում՝ որպես սրբություններ մեր կյանքի, հեշտությամբ տալիս ենք, որ ուրախացնենք, զվարճացնենք, մխիթարենք. ինչպիսի մեղք։

Շարունակությունը՝ էջ 8

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈԹՔԸ

ԿԵՐՊԱՐՄԱՆՏՈՒՄ



Ս. Մարկոսի տաճարի խճանկարը. 1280 թ.

Սկիզբը՝ թիվ 5

Համաշխարհային կերպարվեստը, առավելապես՝ Վերածննդի շրջանը, չափազանց հարուստ է ավետարանական թեմաների մարմնավորումներով, որոնք ի տարբերություն նախավերածնության շրջանի պատկերումների՝ առանձնանում են ոչ միայն կատարողական բարձր մակարդակով, կոմպոզիցիոն սքանչելի կառույցներով, սյուժեից բխող յուրօրինակ հորինվածքներով, ատրիբուտների տեղին ու նշանակալի մերառումներով, արտահայտչամիջոցների վարպետ ներդաշնակումներով, այլև աշխարհաճանաչողության, թեմաների, պատումների, դրվագների մեկնումների բազմաշերտությամբ, իրական ու երեւակայական կերպավորումների տարողունակությամբ, գրական նյութից, տվյալ պարագայում՝ սուրբգրային վկայություններից եւ սեփական ընկալումներից բխող հուզականության առումով:

Պատմությունը վկայում է, որ Բյուզնդական կայսրության փլուզումից հետո շատ-շատ բյուզանդացիներ ապաստանեցին եվրոպական երկրներում՝ իրենց հետ տանելով դեռեւս ան-

տիկ շրջանից ձեւավորված, միջնադարում շուրջ ու ոգի առած հոգեւոր ու մշակութային շատ օրժեքներ՝ եվրոպական երկրների համար քաղաքակրթության նոր ու ոգեղեն դմեր բացելով: Հենց այդ «դմերն» էլ հիմք հանդիսացան քաղաքակրթական ու հասարակական մի նոր իրավիճակի, մի նոր մտածողության, մի նոր հարաբերությունների, որի արդյունքում եվրոպական երկրներում՝ առաջին հերթին Իտալիայում, տեղի ունեցավ նաեւ մշակութային աննախադեպ մի զարթոնք, որը պատմության մեջ ամրագրվեց Վերածնունդ անվամբ:

Քրիստոնեության բերած լույսը պարզ հավատքի ընկալումից վերաճեց ոչ միայն գաղափարախոսության մի նոր պատվարի, այլեւ հասարակական հարաբերությունների, անհատի ու անհատականության դերի, մարդու եւ բնության, մոլորակի ու տիեզերականի փոխազդեցությունների, աշխարհընկալումների, փիլիսոփայական ու գիտական հայեցակարգերի, գաղափարների, ստեղծագործական մոտեցումների ու հայացքների վերանայման ու վերաիմաստավորման: Նման դոգմատիկ կապանքներից ազատված մտածողության

հենքի վրա էլ սկսեցին բացվել դպրոցներ ու ակադեմիաներ, որոնք կոչված էին խթանելու ստեղծագործական ազատությունը, կադապրներից ձեռքազատված մարդկային մտքի ու ոգու անհատական, եսապատկան թռիչքները: Դրան իր մեծագույն նպաստը բերեց նաեւ գրքի տպագրության գյուտը, որն ուղղակի հեղաշրջում մտցրեց գիտական, հոգեւոր ու մշակութային առաջխաղացման գործում:

Ձեռագիր Սուրբ Գրքերին եկան փոխարինելու տպագիրները, մանրանկարչական նկարազարդումներն իրենց տեղը զիջեցին փորագրությանն ու վիմագրությանը: Անտիկ արվեստի «պատվանդանի» վրա շահեկանորեն տեղ գրավեցին եւ ծաղկում ապրեցին մոնումենտալ ու հաստոցային գեղանկարն ու քանդակը: Եկեղեցիների ու տաճարների ինտերիերները զարդարեցին ավետարանական սյուժեներով հագեցած որմնանկարները: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն ու իր բերած Վարդապետությունը նոր ու նորովի վերաիմաստավորվեցին, մարդկային միտքը ճեղքեց խավարամտության դարակոփ պատնեշները եւ ազատորեն ներխուժեց հանրային ու ստեղծագործական կյանքի ոլորտներ: Ստեղծվեցին զլուխգործոցներ, որոնց գերակշիռ մասը պատկանում էր հենց ավետարանական թեմաներին:

Անհատի ու անհատականության, նրա խոհափիլիսոփայական աշխարհընկալման, սեփական անձի ու հասարակության, ժամանակի ու պատմության, սեփական եսի եւ ուրիշների հանդեպ ունեցած պատասխանատվության խնդիրն առաջնային դարձավ ստեղծագործության մեջ: Եվ մարդու «ճակատագիրը» որպես արարչանման էակի նախասահմանություն, որպես անհատական բացառիկություն, խռովեց-փոթորկեց ստեղծագործական միտքը: Հենց այս ենթատեքստում էր, որ Մարդ-Աստված զուգահեռը դարձավ վերածննդյան արվեստի հիմնական խթանիչ ուժը:

Ի տարբերություն ավետարանական մյուս թեմաների եւ դրվագների, որոնց բազում ու բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել նաեւ վաղ միջնադարյան նկարչության, առավելապես՝ մանրանկարչության մեջ, «Գեթսեմանիի աղոթքի» ոչ մի օրինակ հնարավոր չեղավ գտնել այդ շրջանի ոչ գրքային արվեստում, այսինքն՝ սուրբգրային նկարազարդումներում եւ ոչ էլ միջնադարում սկզբնավորված ապակենկարչության (վիտրաժ) մեջ: Ի դեպ, կերպարվեստի այս ժանրը սկսեց ծաղկում

ապրել 11-12 դդ. հռոմեակաթղիկական եւ հետագայում նաեւ՝ գոթական (12-16 դդ.) եկեղեցաշինության մեջ:

«Գեթսեմանիի աղոթքին» չանդրադառնալու պատճառը թերեւս այն էր, որ այդ շրջանում աստվածաշնչյան պատումների նկարչական վերարտադրումները մեծ մասամբ դիդակտիկ միջոց էին ծառայում Սուրբ Գրքի կարետրվող պատումների սյուժեներն առավել ընկալելի դարձնելու եւ կամ ընկալումն ակտիվացնելու համար՝ առանց գաղափարական, հոգեկան, հոգեբանական, խոհափիլիսոփայական վերլուծումների ու մեկնությունների:

Քրիստոնյայի համար՝ անկախ ազգությունից, Հիսուս Քրիստոսի չարչարանաց օրերը մարդկայնորեն ամենատազնապալիցն են, զգացմունքայնության առումով՝ ամենաարվածը: Իսկ արվեստագետը, ով համարվում է մարդու գերզգայուն տեսակը, բնականաբար առավել զգացական ընկալում ունի մարդու Որդու՝ ողբերգական մահից առաջ կրելիք, սպասվելիք տազնապնդների, չարչարանքնե-



Ս. Մարկոսի տաճարի խճանկարը. դրվագ

րի, տառապանքների, նվաստացումների եւ դրանք անսակարկ տանելու պատրաստականության հանդեպ:

Շարունակությունը՝ էջ 8


ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԻՄ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 15-16

Տարածաժամանակային ընդգրկումը

Աղայանի գրական երախայրիքը «Հարկավոր է օգնել չքավորներին» բանաստեղծությունն էր, որ 1862 թ. մայիսին տպագրվել էր «Մեղու Հայաստանի» լրագրում: Որպես գրական նախափորձ՝ այն բավական խորությամբ էր ներկայացնում ժողովրդի տխուր վիճակը՝ պայմանավորված ուսման, արհեստի կարոտությամբ: Տպարանում աշխատելու ժամանակ Աղայանի ստեղծագործությունները հավանության են արժանանում շրջապատի կողմից: Իր տպարանական ընկերոջ՝ Միքայելի հետ Աղայանը ճանապարհ է ընկնում Հյուսիսային Ռուսաստան: Բավական ծանր պայմաններում, նյութական զգալի կարոտություն ունեցող գրողը վճռում է զննվ թեոդոսիա՝ իսպիայան տպարանում աշխատելու եւ Մոսկվա հասնելու համար գումար հայթայթելու: Այստեղ էլ դժվարություններն ու խոչընդոտները քիչ չէին: Աղայանը ներկայացնում է Հարություն իսպիայանի դիմաստվերը. «Այդ ժամանակ թաղանուճ բնակվում էր մի ավելի մեծ ձուկ, կատարյալ լեիթան, որին կարող էինք ավելի թանկ ծախել... Հ. Այվազյանի վրա» (հ. 4, էջ 354):

Ժամանակի մեծահարուստ այս մարդը մեծ դժվարությամբ «տասը մանեթ» է տալիս Ղազարոսին եւ Միքայելին: Աղայանը ներկայացնում է ժամանակի հայ հասարակական-



քաղաքական կյանքում աշխուժություն դրսեւորած նշանավոր անձանց: Հայր Այվազյանի մասին խոսելիս նա շատ կտրուկ է արտահայտվում. «Այվազյան վարդապետն անմատչելի էր իր ստորադրյալների համար թեոդոսիայում. նա իր փառքի վերին ծայրումն էր ավելի եւս բարձրանալու: Այդպես չէր նա թիֆլիսում իր եպիսկոպոս եւ առաջնորդ ժամանակ. շատ էր խեղճացել եւ դառել ոյուրընտել» (հ. 4, էջ 356):

Հայր Այվազյանի ճիշտ հակապատկերն էր նկարիչ Հովհաննես Այվազովսկին: Աղայանը

Թեոդոսիայում անցկացրած օրերից մի հետաքրքրական դեպք է պատմում վերջինիս տան զոդության մասին: Չերքեզի շորեր հագած զոդերի որոնումը կասկածանքի տակ է առնում նույնատիպ հագնված հեղինակի եւ Միքայելի անմեղությունը: Սակայն Այվազովսկին նրանց ազատում է կասկածյալների կազմից: Այվազովսկի եղբայրների մասին Աղայանը գրում է. «Երկու Այվազովսկիները ջոկ-ջոկ աստղի տակ էին ծնված: Աշխարհային փառքը մեկի ետեւից էր վազում, մյուսի՝ առջեւից: Նկարիչը չէր կարող փառքի ճանկերից ազատվել, որքան էլ փախչեր նրանից, իսկ նրա եղբայրը իզուր էր չարչարվում փառքի ետեւից հասնելու» (հ. 4, էջ 358):

Մեծ դժվարությամբ բեռնակիր սայլով հուշագրողը Միքայելի հետ ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա: Երկու հայ երիտասարդներ հայտնվում են Ստ.

Նազարյանցի տպարանում: «Հյուսիսափայլի» խմբագիրն այնքան էլ բարեհամբույր չի գտնվում նրանց նկատմամբ, երբ լսում է, որ հայ են եւ աշխատանք են խնդրում: Այս պահվածքը եւ վատ վերաբերմունքը երիտասարդների նկատմամբ Աղայանին խոր հիասթափության առիթ են տալիս, եւ նա մշում է, որ կարծես Նազարյանցը «Հյուսիսափայլի» խմբագիրը չլինե: Սակայն հեղինակը գերծ է մնում անձնական վերապահություններից եւ օրյեկտիվորեն գնահատում Ստ. Նազարյանցի կատարած դերը հայոց լեզվի նոր ուղղության

զարգացման գործում. «Նազարյանցի եւ Աբովյանցի նմանը դեռեւս չի ծնվել մեր մեջ: Առաքյալներ շատ ունինք, բայց հիմնադիրներ՝ եւ ոչ մեկը» (հ. 4, էջ 359):


Գրաշարի աշխատանքի համար Ղազարոսն ու Միքայելը դիմում են Ստեր Մսերյանցի տպարան: Այս մարդու մասին Աղայանը միանգամայն դրական է արտահայտվում. նա նման չէր իրեն հանդիպած մյուս մարդկանց: Մսերյանցի տպարանում որոշ ժամանակ աշխատելուց հետո Աղայանը Միքայելին թողնում է Մոսկվայում եւ միայնակ տեղափոխվում Պետերբուրգ: Այստեղ նա գիտության ճեմարանի տպարանի արեւելյան լեզուների բաժնում գրաշար է աշխատում: Տպարանի ժամանակակից գույքն ու աշխատանքի արագությունը, իրեն աշխատանք եւ կացարան տված գերմանացի Լեմանի վերաբերմունքն ու աջակցությունը հիացնում են Աղայանին: Հակառակ սրա՝ հուշագիրը ժամանակիցներից դառնությամբ է հիշում Հովհաննես եւ Ռաֆայել Պատկանյաններին. «...լավ ծանոթացա ամենի էլ կյանքի բնորոշ գծերին, բայց ես չեմ ուզում գրել, որովհետեւ իմ նպատակս չէ ուրիշների կենսագրությունն անել, մանավանդ որ դրանց կենսագրությունները գուրկ են բարոյական կողմերից» (հ. 4, էջ 375): Ըստ Աղայանի՝ Ռ. Պատկանյանն օրվա մեջ 24 գույն ցույց տվող, բարոյակրթությունից զուրկ մարդ էր, բայց երբ ծանոթանում է նրա հոր հետ, հասկանում է, որ հոր համեմատ որդին մի հրեշտակ է: Հուշագիրը մարդու բարոյական, մտավոր եւ ֆիզիկական հատկությունները կապում է ժառանգականության հետ. «Բարոյական հատկությունները ժառանգական են, չար ծառը բարի պտուղ տալ կարող չէ» (հ. 4, էջ 373):

Պետերբուրգի գրական միջավայրն իր բարերար ազդեցությունն է ունենում Աղայանի գրական-ստեղագործական կյանքում: Գրական շրջանակների հետ ըննարկումները, երիտասարդական հավաքները, ուսանողական ժողովների ժամանակ ընթերցվող գրական երկերը հայ երիտասարդությանը համախմբելու, գրական-հասարակական կյանքին աշխուժություն հաղորդելու միտում ունեին:

Շարունակությունը՝ էջ 8

ՏԻՐՈՋ ՎԵՐՋԻՆ ԱՂՈԹՔԸ

ԿԵՐՊԱՐԱՆԱՏՈՒՄ



Դուչչո դի Բուոնինսենյա. Գեթսեմանիի աղոթքը, 1308-1311 թթ.

Սկիզբը՝ էջ 7

Հիսուսն Աստծո Որդին է, Ով աշխարհ եր առաքվել Հոր կողմից՝ Իր վրա վերցնելու մարդկության մեղքերը եւ քավելու դրանք։ Բայց Նա նաեւ մարդու Որդի է՝ ծնված երկրային կնոջից, ստեղծված միս ու արյունից, օծոված մարդուն բնորոշ զգացումներով ու զգացողություններով։ Ուստի՝ Հիսուսի մեջ ամբողջապես ու համարժեք գործում էին տիեզերականն ու երկրայինը, աստվածայինն ու մարդկայինը, հավիտենականն ու ժամանակավորը։ Եվ վասն մեղավորներիս հոգու փրկության անասելի չարչարանքներ կրելու, խաչի վրա մահն ընդունելու՝ մարդու Որդու հոժարակամությունը շատ ու շատ նկարիչների մղել է զուտ մարդկայնորեն եւ յուրովի

ապրելու այդ զգացումների եմթաշերտերն ու դրանց իմաստային խորքայնությունը, կերպարվեստի լեզվով արտահայտելու դրանք՝ նախապատվություն տալով ավետարանական այդ պատումում արծարծվող որոշակի նրբությունների ու միտումների։

Ըստ Մատթեոս ավետարանի՝ Տերը, աշակերտներից «մի փոքր առաջ գնալով, ընկավ երեսի վրա»

եւ աղոթեց։ Իսկ Դուկաս ավետարանիչն այս դրվագը նկարագրելիս ասում է, թե Հիսուսը «ծնրադրեց»։ Աղոթքի բուն մեկնության համար, անշուշտ, նշանակություն չունի՝ Հիսուսը երեսի վրա ընկավ, թե ծնրադրեց, սակայն տեսարանը պատկերելու, աղոթող Տիրոջը կերպավորելու առումով նկարիչներին հնարավորություն է ընձեռվել կոմպոզիցիոն կառույցի պլանային լուծումների, Տիրոջ ֆիզիոլոգիային շեշտադրումի միջոցով վեր հանելու կերպարի ներքին ողբերգականությունը՝ դրանից «հեռու» մնալու ցանկությունից միմեջեւ այն հոժարությամբ ընդունելու գերագույն պատրաստականությունը։

«Գեթսեմանիի աղոթքի» ամենավաղ պատկերումը Ս. Մարկոսի տաճարում (Վենետիկ)


գտնվող սքանչելի խճանկարն է՝ կատարված 1280 թ.։ Այս խճանկարը լուծված է հռոմեական ճարտարապետական կառույցներում անտիկ շրջանից ի վեր մեծ կիրառում ունեցող արվեստի այս տեսակին բնորոշ բոլոր նրբություններով։ Չնայած այս գործն առավելապես ավետարանական տեքստի զուտ պատկերային վերարտադրություն է՝ հեռու հոգեկան ու հոգեբանական ընկալումներից, սակայն քրիստոնեական մշակույթի պատմության մեջ այն անգնահատելի է, քանզի նախադերձնության արվեստի անկրկնելի այդ մոտիվը թերեւս խորհելու տեղիք տվեց Վերածննդի նկարիչներին՝ կերպարվեստի լեզվով մտորելու նաեւ «Գեթսեմանիի աղոթքի» խորհրդանշական իմաստի, դրանում առկա հոգեւոր, հոգեկան ու հոգեբանական ակնարկների մասին։

Նախավերածննդյան շրջանին է պատկանում նաեւ Սիենայի (Վենետիկ)՝ Ժամանակին բավականին հայտնի դպրոցի լավագույն ներկայացուցիչներից Դուչչո դի Բուոնինսենյայի համանուն կտավը՝ կատարված 1308-1311 թթ.։ Հետաքրքիր է, որ այս եւ վերը նշված խճանկարի միջեւ առկա մի շարք տարբերություններով հանդերձ (Ժամանակային, գեղանկարչական կատարողական տեխնիկայի)՝ կան նաեւ որոշակի ցայտուն ընդհանրություններ՝ կապված գունային (դեղնադաշնագույն), հորինվածքային (մեկ հարթության մեջ երեք դրվագների կիրառում, լանդշաֆտի միատեսակ պատկերում, ոճական տարրերի առկայություն), ֆիզիոլոգիայի պլաստիկ լուծումների հետ, որոնք հուշում են խճանկարի էսքիզի՝ նույն դպրոցի նկարչի գործը լինելու մասին։

Վաղ շրջանի այս պատկերները հիմնականում ունեն պատմական բնույթ։ Կոմպոզիցիաները կառուցված են ժամանակաշրջանին բնորոշ հարթաչափային լուծումներով։ Ֆոնը, լանդշաֆտը եւ մնացած ատրիբուտները հիմնականում կատարված են դեղինի եւ սեւի՝ դասական համադրություններով, կերպարները՝ թե՛ Տիրոջ եւ թե՛ աշակերտների, չունեն բնութագրող հոգեբանական ու անհատական որոշակի գծեր։

Հետզհետե՝ արդեն Վերածնության շրջանում, ստեղծվեցին «Գեթսեմանիի աղոթքի» կերպավորման մոր հնարներ ու սիմվոլիկ ատրիբուտներ, փոխվեց կերպարների բաշխվածությունը՝ հնարավորինս պահպանելով ավետարանիչների թողած նկարագրությունները։

Թեպետ պրոֆեսիոնալ նկարիչների գործերում հորինվածքներն էական փոփոխություններ չկրեցին, կառուցվածքային մոր մտահղացումներ, ըստ էության, չուներան, հիմնականում պահպանվեց հարազատությունը ավետարանիչներից որեւէ մեկի թողած նկարագրության-տեղեկությանը, սակայն կարեւորվեցին պատկերի կոմպոզիցիոն կառույցի, գույնի ու գունաթույրի, գծի եւ ուրվագծի



Դուչչո դի Բուոնինսենյա. Գեթսեմանիի աղոթքը, դրվագ

գեղանկարչական մերդաշն լուծումները եւ անշուշտ՝ կերպարների հոգեբանական բնութագրումները։

Շարունակելի

Աստղիկ ՍՏԱՄԲԵՐՅԱՆ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 7

Հավաքույթների մասնակիցների թվում էին Գրիգոր եւ Անդրեաս Արծրունի եղբայրները, Սեդրակ Մադիմյանը, Ռուբեն Զալալյանը եւ այլք։ Նրանց խմբում ընդգրկված Աղայանը մոր երկ է պատրաստում հաջորդ քննարկման համար։ Կուտակված մտավոր ներուժն Աղայանին ստեղծագործելու ակնթարթներ է պարգեւում, եւ նա համարձակորեն գրում է. «Միթե ես պակաս կգրեմ, քան թե Ռաֆայել Պատկանյանը, քան թե Նազարյանը» (հ. 4, էջ 382)։

Հեղինակը մեծ ոգեւորությամբ է խոսում «Արություն եւ Մամվել» վեպի ստեղծագործական ընթացքի մասին. «Գրիչս չէր կարողանում հասցնել թղթին զգացմունքներիս բուռն եւ արագ հոսանքը։ Երանի քառասուն ձեռք ունենայի այս րոպեիս», - ասում էի ես» (հ. 4, էջ 390)։ Այդ վեպը գրել է բուռն ներշնչանքով եւ ստեղծագործական մի բռնկումով։ Իր այդ վիճակն Աղայանը նմանեցրել է Խ. Աբովյանի հոգեվիճակին, երբ վերջինս իր «Վերք Հայաստանին» գրելիս հաճախ անդադար գառնացել է, գոռացել։ Ստեղծագործող մարդու հոգեվիճակի, ներշնչանքի ոգեւորությունը հեղինակը համեմատել է բնության երկունքի հետ։ Աղայանի երկը մեծ ոգեւորությամբ է ընդունվում ուսանողական ժողովի ժամանակ։ Գրողը եռանդուն մասնակցություն է ունենում այդ ժողովների քննարկումներին։

Սակայն Աղայանը՝ որպես հուշագրող, նաեւ նշում է, որ հասարակությունն իր վեպը Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հետեւություն համարեց, եւ ի հավելումն այդ ամենի՝ գրում է. «Այդպես չէ։ Նրա «Վերք Հայաստանին» ողբ է հայրենիքի թշվառության վրա, ողբ հայրենասերի, բխած մի զգայուն սրտից, զարգացած ուղեղից։ «Արություն եւ Մամվելը» բերում է մի բոլորովին մոր ուղղություն, բոլորովին ինքնուրույն։ Սա մի պատերազմ է հայտնում հին գաղափարների, հին դաստիարակության դեմ, որոնց վրա չի ողբում, այլ հարձակվում է անխնայ եւ նրանց տեղը տարածում մորը եւ լավագույնը» (հ. 4, էջ 395)։

Աղայանն առիթ է ունենում ծանոթանալու Րաֆֆու հետ։ Զրույցի ընթացքում Րաֆֆին գովաբանում է Աղայանի վեպը՝ նշելով. «Ես կարդացի ձեր «Արություն եւ Մամվելը» եւ ինձ



վրա շատ խոր տպավորություն գործեց, այդպիսի գրվածք չկա մեր մեջ» (հ. 4, էջ 428)։ Իսկ Րաֆֆու մասին Աղայանն ասում է, որ ուներ վառ երեսակայություն եւ կյանքից ստացած պաշար։

1865 թ. Պետերբուրգում Աղայանն առիթ է ունենում ծանոթանալու Միքայել Նալբանդյանի հետ։ Նրան բնութագրելիս անմիջական համեմատություն է տանում Պատկանյանի հետ՝ գրելով. «Նալբանդյանի տաղանդը, մտավոր զարգացումը, լեզվի հարստությունը անհամեմատ բարձր էր Ռ. Պատկանյանից, իսկ բնավորությամբ շիփ-շիտակ էր Նալբանդյանը, ինչպես ուղիղ վեր բարձրացող մի բարդի, միմեջեւ Պատկանյանը մի տատակ էր փռված գետնի երեսին, որի մոտով անցնել էր կարելի անպատիժ» (հ. 4, էջ 402)։

Պետերբուրգից Հայաստան վերադարձած Աղայանը 1868-ին Գետրգ կաթողիկոսի կողմից էջմիածնի տպարանում աշխատելու հրավեր է ստանում։ Էջմիածնում Աղայանը «Արարատ» ամսագրի խմբագրի պաշտոնն է ստանձնում։

Շարունակելի

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԵՏՐՈՊՈԼԻՏ ԱՆՏՈՆ ՍՈՒՐՈՇՄԿԻ ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 6

Հետո մենք տեսնում ենք մեկ այլ մարդու, արդեն ոչ թե կրոսեր որդուն, այլ այն որդուն, ով այդպես էլ չհասկացավ, թե ինչ տեղի ունեցավ նրա (կրոսեր որդու) եւ հոր միջեւ։ Նա միշտ եղել է լավ եւ բարի որդի, Հոր կամքին չի հակառակվել, ինչպես հենց ինքն է ասում՝ «ամբողջ կյանքս ես քո ստրուկն եմ եղել, ստրուկի պես ծառայել քեզ», որովհետեւ «բածոռ» բառը սլավոներեն հզոր բառ է, ճիշտ ստրուկ (раб) բառից։ Ամբողջ կյանքում նա զգում էր, որ ինքը պարզապես իր հոր աշխատողն է՝ հանուն արյան, կերակրի, մարդկային հարաբերության, այն արտոնության, որն արյունակցական կապն է տալիս ստրուկներին։ Եվ ահա ցնցոտիներով վերադառնում է կրոսեր որդին. ամեն ինչ կորցրել է. կորցրել է ուրախությունը, որդի լինելու իրավունքը, ինչպես հաճախ ասում ենք՝ «ամեն ինչ կորցրել ենք»։ Եվ դրան մոտ նրան սիրով դիմավորում է հայրը։ Իսկ երբ վերադառնում է ավագ որդին, նա, ով միշտ պատկանում էր տանը, միշտ հոր հետ է եղել, երբեք չի նահանջել այդ տան ճշմարտությունից, եւ լսում է, որ օտար մարդ է եկել իրենց տուն՝ քաղցած, մրսած, զրկված, ով մի ժամանակ կարող էր պատկանել այդ տանը, սակայն հեռացել էր... Եվ թող իր համար մնա հեռավոր երկրում, բայց ոչ, վերադարձով, վատնեց կես ունեցվածքը, իսկ հիմա՝ ինչ։ Մնացածի վրա է աչքը, խլել է ուզում... Եվ նա ասում է, ինչպես մենք ենք հաճախ ասում՝ «քո որդին է», նա չի ասում՝ «իմ եղբայրը», ոչ, նա նրա համար եղբայր չէ, այլ՝ օտար. քո որդին, ով ամեն ինչ ծախսել է անառակների վրա, վերադարձել է, եւ դու խնջույք ես պատրաստում, ուրախանում, որ ինչ-որ օտար մեկը վերադարձել է, իսկ ինձ այդ ամենից քիչ կհասնի։ Եվ հայրը նրան քնքշորեն պատասխանում է՝ «քո եղբայրն է վերադարձել». նա մեռած էր, հիմա կենդանի է։ Նա կորած էր, հիմա գտնվեց. միթե չպետք է ուրախանանք, միթե չպետք է ցնծանք...

Ահա հիմա մայենք մեզ, դժոխքն ունենալ ենք՝ անառակի, թե՛ ճշմարիտ զավակի։ Եվ այստեղ, ինչպես մախորդ անգամ, ցավով կարելի է նկատել, որ նման ենք եւ անառակին, եւ ճշմարիտ զավակին՝ այն ամենով, ինչը ճշմարիտ չէ։ Սակայն արդյոք ունենք մենք ավագ

որդու ճշմարտացիությունը եւ ունենք արդյոք կրոսերի վստահելի որդիությունը։ Կրոսեր որդին ավագին կընդուներ, երես չէր թեքի, նա կրոսերին օտար չէր։ Իսկ հայրը հավասարապես ընդունում է եւ մեկին, եւ մյուսին։ Ցավով ընդունում է մեկին՝ ճշմարիտ զավակին, ուրախությամբ՝ մյուսին, որը հոգում պահպանել էր այն գիտակցությունը, որ հայր ունի, որ կարող է վերադառնալ հոր մոտ, որ կա տուն, ուր կարող է գալ։ Նա չէր մտածել, որ ավագ որդին կարող է դուռը նրա առջեւ փակել, նա միայն մտածել էր, որ հայրը, ով համաձայնվել էր նրա համար մահանալ, թույլ կտար նրան ապրել։ Ահա թե ինչ է նաեւ մեզ առաջարկվում. «Եկեք Ինձ մոտ բոլոր հոգնածներդ եւ բեռնավորվածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28)։ Մեր առջեւ Հայրն է, բայց ինչ տիպ է, որ այդքան հաճախ Նրա կողքին կանգնած է քարե, անսիրտ, հոգով կարծես մահացած ավագ որդին, ով միշտ եղել է հոր տանը, իսկ հիմա չի ցանկանում ընդունել «օտարին»։ Ամեն։

Ռուսերենից թարգմանեց
Արմինե ՏԵՐՏԵՐՅԱՆԸ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՉԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 19.09.2018 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ